

ԳԼՈՒԽ ԺԸ.

1 Յաղագս Անգեղ տանն:

2 Հարկաներ եւ յԱնգեղ տունն զբազումս, եւ հաներ ընդ սուր: 3 Բայց աշխարհն, զի ոստան արթունի լեալ էր վաղ վաղ, բնակիչք գաւառին եւ ինքեանք կային ի հարկի ծառայութեան:

ԳԼՈՒԽ ԺԹ.

1 Յաղագս գաւառին Անձտայ:

2 Ապա ի գաւառն Անձտայ արշաւեր, եւ հարկաներ Մուշեղ զկողմանս գաւառացն այնոցիկ՝ որ շուրջ էին զնովաւ. քանզի եւ նոքա ապստամբեցին ի թագաւորութենէն Արշակունեաց: 3 Հաներ ընդ սուր զտեսարս գաւառին. առնոյր պանտանդս, եւ նուաճեր. ի հարկի ծառայութեան թագաւորին Հայոց Պապայ զամենեսեան առ հասարակ կացուցաներ:

ԳԼՈՒԽ Ի.

1 Յաղագս Մուշեղի սպարապետին Հայոց:

2 Այլ քաջն զաւրավարն սպարապետն Հայոց լի էր քինիւ մեծաւ¹ եւ բազում նախանձու զամենայն աւուրս կենաց իւրոց, եւ միամտութեամբ եւ արդար վաստակով ջանայր հանապազ եւ վաստակեր ի վերայ թագաւորութեանն Հայոց աշխարհին: 3 Չտիւ եւ զգիշեր կայր յաշխատութեանն. ջանայր եւ ճգներ կալ ի ճակատու պատերազմին, եւ ոչ թողոյր բնաւ ամենեւին եւ ոչ քան զկորի մի գետին ի սահմանաց երկրին Հայոց ուրեք վտարել. ի վերայ աշխարհին կեալ, եւ ի մեռանել ի վերայ անուանն քաջութեան, ի վերայ բնակ տերանց, եւ ի վերայ բնակչաց աշխարհին, ի վերայ քրիստոնէութեանն հաւատոյ, ի վերայ հաւատացեալ յԱստուած եւ ի Քրիստոս մկրտեալ ժողովրդոց, ի վերայ եկեղեցեաց, եւ ի վերայ նուիրեալ սպասուց, ի վերայ վկայարանացն Քրիստոսի, ի վերայ ուխտի Աստուծոյ, ի վերայ քերց եւ եղբարց, ի վերայ մերձաւորաց տոհմին, ի վերայ բարեկաց բարեկիր բարեկամաց հանապազ կայր զաւրավարն Մուշեղ ի նահատակութեան պատերազմին, զանձն փոխանակ առնել աշխարհին. եւ յանձն իւր անխայր ի մեռանել, զամենայն աւուրս կենաց իւրոց առաջի իւրոց բնակ տերանցն Արշակունւոց վաստակեր:

1 *Օրինակ մի յաւելու՝ վրէժխնդիր օրինաց*